10069430

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

« 02 » 08 2014 թ. N ՀԱ/ՅՄ-2-2/6084-14

Ձեր 25,07.2014թ. N15,1-07/0193-14

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ Ն. ԵՐԻՑՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Երիցյան**

Ձեզ եմ ներկայացնում «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը:

Հայտնում ենք նաև, որ նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունենք:

Առդիր՝ 1 էջ:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **Ա. ԱՍԱՏՐՅԱՆ**

Կատարող՝ մոնիթորինգի և վերլուծության վարչություն, հեռ՝ 56 30 7

**0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30**
http://www.mlsa.am info@mlsa.am

Եզրակացություն

**«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն:**

կատ. Ս. Մարտիրոսյան
մոնիթորինգի և վերլուծության վարչություն